



ԱՐԺԱՆԱՎԱՅԵԼ ՀԱՆԴԻՍՈՒԹԵԱՄԲ ՀԿԲՄ-Ը

Բարձր հովանավորությամբ բարձրագույն ուսման և կրթական նախարարուհի Պահիյա Յարիրիի, հանդիսատար և պատկառելի ընտրանիի մը ներկայությամբ, Շաբաթ, 18 Ապրիլ 2009-



Ներկաներն տեսարան մը

ի երեկոյեան ժամը 8:00-ին, Հ.Կ.Բ.Մ.-ի «Արարատեան» սրահին մէջ, Հայկական Կրթական Բարեսիրական Միութիւնը յոբելեանական հանդիսութեամբ մը տօնախմբեց իր հիմնադրութեան 40-ամեակը:

Հոծ բազմութեամբ լեցուն սրահին առաջին շարքին վրայ ականառու էր պետական նախարար Ժան Օղասապեանի, կրթական երեսփոխան տեր և տիկ. ընկ. տողթ. Եղիկ Ճերեճեանի, պետական երեսփոխան մեթո Սերժ Թորոսարգիսեանի, Ս.Դ.Հ.Կ. Լիբանանի Շրջանի Վարիչ Մարմնոյ ատենապետ ընկ. տողթ. Մարտիկ Ժամկոչեանի, Տանն Կիլիկիոյ Արամ Ա. Վեհափառի ներկայացուցիչ գերաշնորհ Նորայր Եպս. Աշքեանի, հայ կաթողիկէ պատրիարքի փոխանորդ Վարդան Եպս. Աշքեանի, Հ.Կ.Բ.Մ.-ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ տեր և տիկ. Վասիլ Ազեանի և լիբանանահայ գաղութի ծանօթ մտաւորական, կրթական մշակ տեր և տիկ. Պէպօ Սիմոնեանի, Լիբանանի Սոս Գայաստանի Հանրապետութեան հաւատարմատար տեր և տիկ. Ռուբեն Խարազեանի, Պէյրուսի քաղաքապետարանի անդամ տիար Վարուժան Գանթարճեանի և Ս.Դ.Հ.Կ. Լիբանանի խորհրդարանի ընտրութիւններու թեկնածու Սեպուհ Գալիպեանի ներկայութիւնը:

Լիբանանի և Հայաստանի քայլերգներուն յոտնկայս ունկընդորոշենէն տոջ, օրուան հանդիսավար Շիրազ Ճերեճեան, բարի գալուստ մաղթեց բոլորին: Ան նշեց, թէ սովորական միութեան մը 40-ամեակը չէր, որ կը նշուեր, այլ սփիւռքահայ իրականութեան մէջ, քառասունամեայ կրթական, բարեսիրական և ընկերային բազում ծառայութիւններով անսկզբութիւններով և գործունէութեամբ հարուստ կազմակերպութեան մը յոբելեանը:

Հ.Կ.Բ.Մ.-ի 40-ամեայ գործունէութեան մասին խօսք առաւ

մով մեկնաբանեց Վահան Թեքեանի «Հաշուեյարդար»-ը: Որմէն էր, տիկին Եփրեմեան հաճելի անակնկալ մը մատուցեց բոլորիս և սրտաբուխ ասմունքեց սփիւռքահայ ծանօթ բնաստեղծ Պէպօ Սիմոնեանի «Մենք Սերունդ Տարագիր» բանաստեղծութիւնը: Գեղարուեստական յայտագիրով Երուանդ Բէշիշեան, յաջորդաբար մեներգեց Ալեքսէյ Յեքիմեանի մեկնաբանութեամբ «Բարի Արագիլ» և «Երգիր Ինձ Համար» երգերը, դաշնամուրի վրայ Մարիա Յովսէփեանի ընկերակցութեամբ, որմէն էր խօսք առաւ Հ.Կ.Բ.Մ.-ի վարչութեան երկարամեայ անդամներէն Կիրակոս Թիւթունճեանը: Յարգելի բնաստեղծ անդարդարձաւ Հ.Կ.Բ.Մ.-ի գործունէութեան մասին. «Հայկական Կրթական Բարեսիրական Միութեան առաջնահերթ նպատակը եղած է կրթութիւն ջամբել հայ մանուկին և պատանիին: Հ.Կ.Բ.Մ.-ը կը հաւատայ նաեւ թէ հայ երեխան պետք է դաստիարակուի մարդկային սկզբունքներով, հայկական ոգիով և գաղափարական շունչով: Այս առաքելութիւնը Միութիւնն կ'իրագործէ գլխաւորաբար իր սեփականութիւնը եղող Սահակեան-Լեւոն Սկրտիչեան Գոլէճին միջոցով, որը շարունակութիւնն է Սահակեան վարժարանին: Սահակեան վարժարանը, գաղութիս ամենէն ինչ կրթօճախ-



Պետական երեսփոխան Եղիկ Ճերեճեան Պէպօ Սիմոնեանին կը յանձնէ Կրթական Նախարարութեան Պատուոյ Գիրը

ներէն մէկն է, հիմնուած 1923-ին և մկրտուած՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Սահակ Բ. հապայեան կաթողիկոսի անուամբ: Ան կը գտնուէր Հաճն թաղի մուտքին:

Երբ Սահակեան վարժարանի տնօրէնութիւնը դժուարութիւն կ'ունենայ հողատիրոջ հետ, նպատակամար կը նկատուի դըպ-



Հուրի Ճերեճեան և Պէպօ Սիմոնեան

եանը, ապա ընթերցեց կրթական նախարարութեան շքանշանը յանձնելու առիթով, պատրաստուած պետական հրամանագիրը և Հ.Կ.Բ.Մ.-ի ու բոլոր ներկաներուն անունով շնորհաւորեց հայ գիրի ու դպրութեան երախտաւորը և անոր յանձնեց կրթական նախարարութեան շքանշանը: Պէպօ Սիմոնեան այս առիթով փոխանցեց իր սրտի խօսքը: Ան ըսաւ. «Թոյլ տուէք յայտնելու իմ շնորհակալութիւններս Հ.Կ.Բ.Մ.-ի Լիբանանի Շրջանային Վարչութեան, որ Միութեան 40-ամեայ յոբելեանին առիթով և այդ ծիրէն ներս իմ կրթական ծառայութիւններս և մշակութային վաստակ պատճառելու ազնիւ գաղափարը ունեցած է նախաձեռնելով գայն ներկայացուցելու Լիբանանի կրթութեան ու բարձրագույն ուսման նախարարութեան: Հանրային և պետական գործիչ, երեսփոխան տողթ. Եղիկ Ճերեճեանի միջոցաւ կատարուած դիմումին ընդառաջելով կրթութեան բարձրագույն ուսման նախարարուհի տիկ. Պահիյա Յարիրի արժանի նկատած է զիս պարգևատրելու շքանշանով, որուն համար շնորհապարտ կը մնամ նաեւ իրեն:

Ո՛չ առաջինն եմ և ոչ ալ վերջինը պիտի ըլլամ լիբանանեան շքանշանի արժանացող հայերուն: Տարբեր բնագաւառներու մէջ, արուեստի, լրագրութեան, ճարտարարուեստի, ծառայած հայեր արդէն արժանացած են համապատասխան գնահատութիւններու: Ասիկա ապացոյցն է այն իրողութեան, որ հայերը Լիբանանի մէջ համարկուած են, իրենց ազգային ինքնութեան հանդէպ հաւատարմութեամբ, Լիբանանի քաղաքական, ընկերային, մշակութային, տնտեսական կենսքին:

Որեւէ երկրէ աւելի Լիբանանի մէջ է, որ հայ դպրոցը պահած է իր կրթական և մշակութային ինքնավարութիւնը՝ իր հաւատքն ու կրօնը, գիրն ու լեզուն և պատմութիւնը ազատօրէն ջամբելու իր բարձրագոյն սերունդներուն: Ահա թէ ինչու լիբանանահայութիւնը կառչած կը մնայ ու պիտի մնայ Լիբանանի ազատութեան, անկախութեան, գերիշխանութեան և ժողովրդա-



Վասիլ Ազեան և Հուրի Ճերեճեան



Հայկարամ Գալիսեան



Չուարթ Նաճարեան



Տոքթորա Սիրվարդ Նալպաստեան-Չոպանեան

Հ.Կ.Բ.Մ.-ի դարմանատուներու երկարամեայ վաստակաւոր տնօրէն, «Մասիս» ամսաթերթի խմբագիր՝ Սարգիս Նաճարեան: Ան ըսաւ. «Ո՛չ մէկ զեկուցում կամ հաշուեկշիռ կրնայ այնքան հարազատ պատկերացումը տալ չորս տասնամեակներու վրայ տարածուած աշխատանքի մը, որքան՝ նոյնքան կատարած գործը և անոր արդիւնքը, որոնք աւելորդ կը դարձնեն ամեն խօսք: Իսկ գործին վկաններուն և անկէ օգտուողներուն, այլ խօսքով մեր ժողովուրդի աշխատաւոր, համեստ ու կարիքաւոր դասակարգին վկայութիւնն ու գնահատականը անգերազանցելի են:



Կիրակոս Թիւթունճեան

Առողջապահական և ընկերային ծառայութեան մարզերէն ներս Հ.Կ.Բ.Մ.-ի գործունէութիւնը սկիզբ առաւ Լիբանանի քաղաքացիական պատերազմի տարիներուն: Ան հետեւանքն էր մեր ժողովուրդի բնական մէկ պահանջին, որ անտարբեր չէր կրնար ձգել Միութիւնը:

Այսօր, երախտագիտութեամբ կը յիշենք այն կամաւորները, որոնք ահ ու սարսափի տարիներուն անձնուրացաբար և արհամարհելով ամեն վտանգ, ծառայեցին սարսափահար մեր ժողովուրդին: Անոնք՝ Հ.Կ.Բ.Մ.-ի դոջին ներքեւ, կազմակերպեցին շտապ օգնութեան ջոկատներ, եղան հիւանդներու ու վիրաւորներու փրկութեան լաստը, դէղորայք, սննդանիւթ և մինչեւ իսկ շուր հասցնելով ապաստանարաններու մէջ ծուրած ժողովուրդին:

Գաղութիս ծանօթ ասմունքող, Անի Եփրեմեան, խոր ապրու-

րոցը օժտել սեփական հողատարածքով և արդիական կառուցով: Կը կազմուի Լուիսիանայի մարմին մը, որուն անդամներէն՝ Գնէլ Եպս. Ճերեճեան և Յարութիւն Կուժունի կը կատարեն համագաղութային նուիրահաւաք յատկապէս Հարաւային և Հիւսիսային ամերիկաներուն մէջ, որուն արդիւնքով Սին Էլ Ֆիլի մէջ կը գտնուի ներկայ դպրոցին հողը: 28 Յունուար 1973-ին, հանդիսատար ու համագաղութային շուքով կը կատարուի հիմնարկէի հանդիսութիւնը, հովանավորութեամբ Լիբանանի կրթական նախարար և փոխ վարչապետ տողթ. Ալպէր Մուխայպի և ներկայութեամբ գաղութի ղեկավարներու ու հոծ բազմութեան:

1983-ին Հ.Կ.Բ.Մ. տօնեց Սահակեան-Լեւոն Սկրտիչեան Գոլէճի 60-ամեակը: Տեղի ունեցաւ պաշտօնական 60-ամեակի հանդիսութիւն մը և պարահանդէս մը:

Գոլէճին հիմնադրումէն ի վեր, տարբեր յանձնախումբեր, սատար կանգնած են անոր բարգաւաճման: Յիշենք ինամակալութիւնը, Մայրերու Յանձնախումբը, Շրջանաւարտից Միութիւնը, Արուեստասիրաց Յանձնախումբը, որոնք կազմակերպած են դասախօսութիւններ, ցուցահանդէսներ, քերթներ, գեղարուեստական ձեռնարկներ, ճաշկերոյթ-պարահանդէսներ, դաշտագնացութիւններ, եւայլն: Գոլէճի տարիներով օժտուած է Գ. Կիւլպէնեան հիմնարկութիւնը: 1984-էն սկսեալ, Սահակեան գոլէճը պարբերաբար կը հրատարակէ «Ուսանող» պարբերագիրքը:

Շնորհալի քոյրեր՝ Լուսինէ և Յուրթ Բանճարեան, դաշնամուրի վրայ մեկնաբանեցին Արամ Խաչատուրեանի «Մուրերու Պարը» և «Լեգգինկա»-ն: Նոր Սերունդ Մշակութային Միութեան պարուիներէն Լիան Յարութիւնեան կատարեց «Տարտոս Տուի Հովերին» մենապարը:

Հ.Կ.Բ.Մ.-ի հիմնադրութեան 40-ամեակին առիթով, Լիբանանի Շրջանային Վարչութիւնը գեղեցիկ գաղափարը յղացած էր կրթական նախարարութեան յատուկ շքանշանով մեծարելու գոլէճի երկարամեայ տնօրէն, կրթական մշակ, գրականագետ Պէպօ Սիմոնեանը: Այս ուրախ առիթով, յանուն կրթական նախարար Պահիյա Յարիրիի, պետական երեսփոխան տողթ. Եղիկ Ճերեճեան, բեմ հրաւիրեց պարգևատրեալ Պէպօ Սիմոն-

վարութեան և անոնց պահպանման համար մղուած հայրենասիրական պայքարին: Այդ արժեքներուն ամրապնդումով պայմանաւորուած է հայ դպրոցին կրթական և մշակութային ինքնավարութիւնը:



Պետական երեսփոխան Եղիկ Ճերեճեան

Արաբական առածը կ'ըսէ. «Ինձի գիր մը սորվեցուցած անը իմ բարերարս է»: Ես ինքզինքս բարերար չեմ նկատեր: Ես մեր մշակոյթի և գիրի մեծագոյն բարերարը կը նկատեմ Մեսրոպ Մաշտոցը: Անկէ վերջ եկող բոլոր հայ դպրոցի և գիրի սպասարկուները անոր կրտսեր աշակերտներն են: Ես ալ Մեսրոպ Մաշտոցի խոնարհ աշակերտներէն եղած եմ և ըստ կարելոյս հայ մշակոյթի լոյսը, հոգեմտաւոր գանձարանի բարիքները դաստիարակութեան, գիր և գրականութեան ճամբով փոխանցած եմ, սերմանած հայ սերունդներու գիտակցութեան մէջ: